

# PEARLS OF ARMENIAN HERITAGE


## ԾԱՂԿԱԶԱՐԴ

«Ովսաննա՛ Բարձրեալին, օրհնեալ՛ ըլլայ ան, որ կու գայ Տիրոջ անունով: Օրհնեալ՛ ըլլայ Դափի թագաւորութիւնը, որ կու գայ: Խաղաղութիւն երկնքին մէջ եւ փառք բարձրունքներուն» (Մատթէոս 21.9):

Ծաղկազարդը Հայ Առաքելական Եկեղեցոյ մեծ տօններէն մէկն է՝ Քրիստոսի յաղթական մուտքը Երուսաղէմ խորհրդանշող, որ կը նշուի Սուրբ Յարութեան տօնէն մէկ շաբաթ առաջ՝ Կիրակի օրը: Այդ օրը, Հիսուս՝ խոնարհաբար, էջի մը վրայ նստած, մուտք կը գործէ Երուսաղէմ: Ժողովուրդը, լսած ըլլալով Իր հրաշքներու եւ Ղազարոսի յարութեան մասին, խանդավառութեամբ կը փռէ իրենց հագուստները ու ծառի ձիւղերը՝ փառաբանելով Անոր:

Մուտքը Երուսաղէմ կը խորհրդանշէ Տիրոջ՝ մեր սրտերու մէջ մուտք գործելն ու մեր կեանքերը նորոգելն Իր ներկայութեամբ: Արմաւենիի ու ծիթենիի ձիւղերը՝ մահուան վրայ յաղթանակն ու արքայական պատիւը, իսկ ուռիներու ձիւղերը՝ հեթանոսներու կերպարանափոխութիւնը կը խորհրդանշեն:

Տօնին նախորդող երեկոյեան կ'ըլլայ նախատօնակը, իսկ առաւօտեան՝ Անդաստանի արարողութիւնը, մանուկներու օրհնութիւնը եւ Սուրբ Պատարագ, ուր հաւատացեալները կը ստանան Սուրբ Հաղորդութիւն:



Ծաղկազարդը կոչ մըն է մեզի՝ խոնարհութեամբ ընդունելու Տէրը մեր կեանքերուն մէջ եւ քայլելու Անոր հետ մինչեւ Խաչի ճանապարհը եւ յարութիւնը:

Տիրոջ Յիսուս Քրիստոսի մուտքը Երուսաղէմ, Պետրոս եւ Յովհաննէս Խիզանեցու կողմէ, 1392, Խիզան, Վասպուրական, ձեռ. 3717, Մատենադարանի հաւաքածոյ: